ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

««Արմինկո» ՍՊԸ կողմից Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը հեռահաղորդակցության ծառայությունների մատուցման վերաբերյալ 2011թ. դեկտեմբերի 30-ի ԱԳՆ թիվ 75 պայմանագրի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2014թ. ապրիլի 01-ին կնքված N ԱԳՆ – 75/1-14 պայմանագրի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

N ԱԳՆ – 75/1-21

ք. Երևան

01 հուլիսի 2021թ.

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Վահագն Մելիքյանի, ով գործում է ՀՀ ԱԳ նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արփինետ» ՍՊԸ-ն, որը հանդիսանում է «Արմինկո» ՍՊԸ իրավահաջորդը (այսուհետև՝ Կատարող), ի դեմս տնօրեն Արմեն Մուրադյանի, ով գործում է «Արփինետ» ՍՊԸ կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Կողմերի միջև 2011թ. դեկտեմբերի 30-ին կնքված ԱԳՆ թիվ 75 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող 1-ին և 2-րդ հավելվածները՝ փոփոխված 2014թ. ապրիլի 01-ին կնքված N ԱԳՆ – 75/1-14 պայմանագրի համապատասխան հավելվածներով, փոխարինվել են սույն պայմանագրի 1-ին և 2-րդ հավելվածներով՝ համապատասխանաբար:
2. Կատարողի կողմից իրականացվում է ԱԳՆ հեռախոսակապի համակարգի արդիականացում, որի նկարագիրը ներկայացված է սույն պայմանագրի 1-ին Հավելվածում: Ներկայացված ներդրումների (սարքավորումների և ծրագրային համակարգի) սեփականության իրավունքը Կատարողի կողմից անհատույց փոխանցվում է Պատվիրատուին՝ ըստ սահմանված կարգի: Սարքավորումների ցանկը և տեխնիկական փաստաթղթերը սույն պայմանագրի կնքման պահին Կատարողը պարտավորվում է հանձնել Պատվիրատուին:
3. Սույն պայմանագրի 2-րդ կետում նախատեսված սարքավորումների և ծրագրային համակարգի սպասարկումը անվճար շարունակվելու է Կատարողի կողմից, իսկ դրանց երաշխիքային ժամկետը երկարաձգվում է սույն պայմանագրով սահմանված ժամկետով:
4. Սարքավորումների օգտագործման ժամանակ առավել բարդ խնդիրներ առաջանալու դեպքում Կատարողն անհատույց տրամադրում է տեխնիկական աջակցություն՝ առանց ժամկետային սահմանափակման:
5. Սպասարկման վերաբերյալ լրացուցիչ համաձայնության առաջացման դեպքում Կողմերը կարող են կնքել լրացուցիչ պայմանագիր:
6. Սակագների փոփոխությունը սույն պայմանագրի 2-րդ Հավելվածում պայմանավորված է այն հանգամանքով, որ Կատարողի կողմից իրականացվող սույն պայամանագրի 2-րդ կետով նախատեսված ներդրումները և համակարգի հետագա սպասարկումը Պատվիրատուի համար չի առաջացնելու վճարման պարտավորություն, ինչպես նաև ապահովելու է Կատարողի կողմից ԱԳՆ հեռախոսակապի համակարգի անխափան աշխատանքը: Սակագների վերաբերյալ լրացուցիչ համաձայնության առաջացման դեպքում Կողմերը կարող են կնքել լրացուցիչ պայմանագիր:

7. Բացի սույն պայմանագրով նախատեսված փոփոխություններից և լրացումներից, Պայմանագրի մյուս կետերը մնում են անփոփոխ և մնում են ուժի մեջ Պայմանագրով և սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում:
8. Սույն պայմանագիրը կնքվում է անժամկետ: Պայմանագիրը կարող է փոփոխվել կամ կասեցվել Կողմերից որևէ մեկի առաջարկությամբ՝ նոր բանակցությունների արդյունքում:
9. Սույն Պայմանագիրը հավելվածների հետ միասին, կազմված է 4 (չորս) էջից, կնքվում է երկու բնօրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ բնօրինակ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

«Արփինետ» ՍՊԸ
ՀՀ, Արմավիրի մարզ, քաղաք Էջմիածին, 1108, Բաղրամյան 22/2
(Իրավաբանական և գործունեության հասցե)

Հեռ. 060 888888

ՀՎՀՀ 04719683
Հ/Հ 2050622092881001
Ինեկոբանկ ՓԲԸ

E-mail: info@arpinet.am

ՀՀ արտաքին գործերի նախարարություն
ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն #2
(Իրավաբանական և գործունեության հասցե)

Հեռ. 010 544041, 060 620000

ՀՎՀՀ 02527728
Հ/Հ 900011196095
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

E-mail: info@mfa.am

«Արփինետ» ՍՊԸ

Տնօրեն

Արմեն Մուրադյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՀՀ արտաքին գործերի նախարարություն

Գլխավոր քարտուղար

Վահագն Մելիքյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 1

«Արփինետ» ՍՊԸ կողմից Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը հեռահաղորդակցության ծառայությունների մատուցման նպատակով տեղադրված սարքավորումների և ծրագրային համակարգի ցանկ և նկարագրություն

Հիմնական սարքավորումներ

2 հատ գլխավոր ԱՀԿ FreePBX մինչև 1000 SIP օգտագործողի միացման և 100 միաժամանակյա զանգեր կատարելու հնարավորությամբ (հիմնական և ռեզերվային):

2 հատ Grandstream UCM6204 - մինչև 500 օգտագործողի միացման և 50/75 միաժամանակյա զանգեր կատարելու հնարավորությամբ (հիմնական և ռեզերվային):

1 հատ Yeaster TA 1610 - 16port FXO Անալոգային հեռախոսային գծերի փոխակերպիչ՝ 16 FXO պորտի հնարավորությամբ:

3 հատ GXV3350 IP/SIP հեռախոս՝ համատեղում է 16 տողանոց IP վիդեո հեռախոսը բազմապլատֆորմային վիդեո համագործակցության լուծման և Android պլանշետի ֆունկցիոնալությամբ (2 հատը՝ համարների արագ հավաքման համակցիչով):

Նկարագիր

Ներկայումս գործող գլխավոր ԱՀԿ-ն, որն ունի 500 բաժանորդի միացման հնարավորություն, որը հնացած է, գործում է խափանումներով և թույլ չի տալիս իրականացնել ծրագրային ապահովման թարմացում, փոխարինվելու է արդիականացված Asterisk հենքի վրա տեղադրված FreePBX ծրագրային ապահովմամբ և մինչև 1000 SIP օգտագործողի միացման հնարավորությամբ համակարգով:

Փոխարինվելու է նաև նախարարի և իր ենթակաների միջև ներքին հեռախոսակապի անալոգային Panasonic հեռախոսակայանը՝ ժամանակակից IP/SIP Grandstream UCM6204 ԱՀԿ-ով, որը հնարավորություն կտա ինտեգրում գլխավոր ԱՀԿ-ի հետ: Երկու ԱՀԿ-ների փոխկապակցելու և նախարարի ու նրա օգնականի փոխարինված նոր սերնդի GXV3350 IP/SIP հեռախոսի սարքերը համակարգին համակցելու արդյունքում հնարավոր կլինի երկկողմ զանգեր կատարել թե՛ ներքին եռանիշ և երկնիշ, և թե՛ քաղաքային (Բիլայն ֆիքսված) կապերով:

Գլխավոր ԱՀԿ-ին միացվելու են ԱԳՆ կենտրոնական ապարատի և արտերկրում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններում առկա հեռախոսահամարները, որոնց միացումը իրականացվելու է փակ ցանցի (VPN) միջոցով:

ԱՀԿ-ն ունի կիրառվող ձայնային կոդեկների միջոցով ձայնի կոդավորում, մասնավորապես՝ G.729, G711, GSM:

«Արփինետ» ՍՊԸ
Տնօրեն

Արմեն Մուրադյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՀՀ արտաքին գործերի նախարարություն
Գլխավոր քարտուղար

Վահագն Մելիքյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2

ՀՀ արտաքին գործերի նախարարությանը տրամադրվող հեռախոսակապի ծառայությունների սակագները*

1. Սակագները.

Գործում է սույն համաձայնագիրը կնքելուց հետո.

- մեկ համարի ամսական վարձ - 2600 դրամ
- ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններում մեկ SIP արձանագրությամբ գործող համարի ամսական վարձ - 2000 դրամ
- հեռախոսակապ Պատվիրատուի համարների միջև - 0 դրամ
- հեռախոսակապ Պատվիրատուի ներքին և «Արփինետ» ցանցերի միջև - 0 դրամ
- 1 րոպե հեռախոսակապ դեպի այլ օպերատորների ֆիքսված կապի ցանցեր - 4,5 դրամ
- 1 րոպե հեռախոսակապ դեպի ՀՀ բջջային ցանցեր - 17 դրամ
- 1 րոպե միջազգային հեռախոսակապ - ներկայացված է www.arpinet.am կայքում և համապատասխանում է գործող ելքային ծառայություններ մատուցող ընկերությունների սակագներին:

2. Կապի որակին վերաբերող դրույթներ

2.1. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող այլ ֆիքսված և բջջային ցանցեր ելքային ու մուտքային զանգերի որակը պիտի համապատասխանի ՀՀ գործող և միջազգային ընդունված ստանդարտներին:
2.2. Դեպի արտերկրներ կատարվող ելքային և մուտքային զանգերի որակը պիտի համապատասխանի ՀՀ գործող և միջազգային ընդունված ստանդարտներին:

«Արփինետ» ՍՊԸ
Տնօրեն

Արմեն Մուրադյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՀՀ արտաքին գործերի նախարարություն
Գլխավոր քարտուղար

Վահագն Մելիքյան

(ստորագրություն)
Կ.Տ.

---

* Սույն Հավելվածում ներկայացված բոլոր սակագները ներառում են ավելացված արժեքի հարկը. Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: